ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 8

<<ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> ԾՐԱԳՐԻ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ- 09, ԽՈՒՄԲ -05, ԴԱՍ-02) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք.Երևան «02» նոյեմբեր 2015թ.

ՀՀ տարա'քային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Գրիգորյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Հ. Մաթևոսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համաձայն «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին>> N1937-Ն որոշման, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով կազմակերպությունը պարտավորվում է «Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայություններ» ծրագրի իրականացման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ) կատարել սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Նախարարությունը պարտավորվում է Աշխատանքների իրականացման համար Կազմակերպությանը տրամադրել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պետության կողմից դրամաշնորհի հատկացման ձևով ֆինանսական աջակցություն:

1.2 Կազմակերպությունը պարտավոր է Աշխատանքներն իրականացնելիս ստացված և գաղտնի ճանաչված տեղեկություններն օգտագործել <<Պետական և ծառայողական գաղտնիքի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով:

1.3 Աշխատանքներն իրականացվում է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված N1-ին և Հավելված N2-ի ն համապատասխան:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. Օգտագործել Աշխատանքների արդյունքները,

2.1.2. Կազմակերպությունից պահանջել ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ հավելված N1-ում նշված բովանդակության համապատասխան,

2.1.3. Կազմակերպությունից պարբերաբար պահանջել և ստանալ տեղեկատվություն սույն Պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.4. Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Կազմակերպության կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները,

2.1.5. Վերահսկել Կազմակերպությանն հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը,

2.1.6. Կազմակերպությունից պահանջել Աշխատանքները կատարել սույն պայմանագրի 4–րդ կետում նշված ժամկետում:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Սույն Պայմանագրի պահանջներին համապատասխան՝

ա. Կազմակերպությունից ընդունել կատարված Աշխատանքների արդյունքը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N1937-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան,

բ. Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով ստեղծված Կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա իրականացնել Կազմակերպության կողմից ներկայացված ամսական հայտերի վճարումը,

2.2.2 Իր և Կազմակերպության կանոնադրություններով սահմանված կարգով, ձևով ու չափերով Կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական աջակցությունն օգտագործել միայն Աշխատանքների իրականացման համար,

2.3.2. Նախարարության հետ համաձայնեցնել երրորդ անձանց պատկանող մտավոր գործունեության պահպանվող արդյունքների օգտագործման, դրանց օգտագործման համար իրավունքների ձեռք բերման անհրաժեշտությունը.

2.3.3. Իր ուժերով և իր հաշվին վերացնել Աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել ծրագրով նախատեսված միջոցառումներից շեղումների,

2.3.4. Նախարարությանն անհապաղ տեղեկացնել Աշխատանքների սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ Աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին,

2.3.5. Նախարարությանը հանձնել Աշխատանքների արդյունքները՝ չխախտելով այլ անձանց իրավունքները,

2.3.6. ՀՀ օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով և կարգով Նախարարությանը ներկայացնել ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ և տեղեկատվություն Պայմանագրի կատարման ընթացքի մասին:

3. Աշխատանքների ֆինանսավորման չափը և կարգը

3.1. Աշխատանքների իրականացման ֆինանսական աջակցությունն ըստ պայմանագրին կից նախահաշվի կազմում է 115812,8 հազ. դրամ, այդ թվում, «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 114.460.000 (Մեկ հարյուր տասնչորս միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ և առ 01.01.2015թ.տարեսկզբի ազատ մնացորդի՝ 1352,8 հազար դրամ:

3.2. Վճարումներն իրականացվում են Կոլեգիալ կառավարման մարմնի կողմից դրական եզրակացության առկայության պարագայում Նախարարության կողմից Աշխատանքների ընդունվելուց հետո՝ հինգ բանկային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2015թ. հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը:

5. Աշխատանքների հանձման և ընդունման կարգը

5.1. Աշխատանքների իրականացման ընթացիկ և վերջնական արդյունքները Կազմակերպության կողմից հանձնվում և Նախարարության կողմից ընդունվում են Կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

8.1. Կազմակերպությունն իրավունք չունի առանց Նախարարության գրավոր համաձայնության այլ Կազմակերպություններին, հիմնարկներին և երրորդ անձանց հանձնել Պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների արդյունքները:

8.2. Աշխատանքների կատարմանը երրորդ անձինք կարող են ներգրավվել միայն Նախարարության համաձայնությամբ:

8.3. Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.4. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղամաս Ա.Միկոյանի 109/8 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h 900011001444 ՀՎՀՀ՝ 02570338 ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ.Գրիգորյան	« Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ 0040 ք. Երևան, Աճառյան 1 «Արարատբանկ» ԲԲԸ h/h 1510002970030100 ՀՎՀՀ՝ 02500731 ՃԿՊԱ ռեկտոր Հ. Մաթևոսյան

Հավելված N 2
N 2015թ. պայմանագիր
_____ հունվար 2015թ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ
_____ Ա.Գրիգորյան
_____ 2015թ.

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

<<ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>>2015Թ

<<ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ>>

ԾՐԱԳՐԻ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ- 09, ԽՈՒՄԲ -05, ԴԱՍ-02)

իրականացման աշխատանքները

ՀՀ Տարածքային կառավարման մարմինների և հանրապետական գործադիր կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպաիրավական ձևից) ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացում տարեկան 2000 ունկնդիր ըստ հաստատված գրաֆիկի:

ՃԿՊԱ

Ռեկտոր Հ.Մաթևոսյան

Կ.Տ.

Հավելված N 1
N 2015թ. պայմանագ
_____ հունվար 2015թ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա.Գրիգորյան
_____ _____ 2015թ

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

<<ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ>> 2015Թ.
<<ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ>>
ԾՐԱԳՐԻ (ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ- 09, ԽՈՒՄԲ -05, ԴԱՍ-02)

հազ.դրամ

	.	1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9ամիս	Տարի
	Դրամական միջոցների մն. առ 01.01.2015թ	338.7	676.4	1014.6	1352.8
	2015թ.ՀՀ պետական բյուջեից նախատեսված հատկացումներ	**22548.6**	**49332.3**	**76115.9**	**114460**
	Ընդամենը ծախսեր	22887.3	50008.7	77130.5	115812.9
	այդ թվում				
1	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ	17651.9	38619.1	59586.3	89603.4
3	Գրասենյակային ապրանքներ և նյութեր և տնտեսական ապրանքներ	306.5	670.6	1034.7	1556
4	Կապի ծառայության ծախսեր	231.7	506.9	782	1176
5	Էլեկտրոէներգիայի և ջեռուցման ծախսեր	2843.8	6221.7	9599.7	14435.6
6	Տրանսպորտային ծախսեր	1280.9	2802.4	4323.8	6502
7	Կոմունալ ծախսեր(ջուր և աղբահանություն)	272.7	573.1	873.5	1249.6
8	Ընթացիկ վերանորոգման ծախսեր	299.8	614.9	930.5	1290.3

Ռեկտոր
ԿՏ Գ.Մաթևոսյան